Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/17913/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023 թվականի օգոստոսի 23-ին, Երևան քաղաքում,

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր **Մարինա Տաշչյանի** (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Մովսեսյան» ՍՊ ընկերության ընդդեմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության տնօրենի 30.06.2023թ. 28-379 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին և ՀՀ ֆինանսների նախարարի տեղեկալ Ա. Ավանեսյանին ներկայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Մովսեսյան» ՍՊ ընկերության կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության տնօրենի 30.06.2023թ. 28-379 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին և ՀՀ ֆինանսների նախարարի տեղեկալ Ա. Ավանեսյանին ներկայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

28.07.2023 թվականին Դատարանը որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է նշանակել 2023 թվականի օգոստոսի 24-ին:

28.07.2023 թվականին Դատարանը որոշում է կայացրել ապացույց պահանջելու մասին:

Դատարանը, ուսումնասիրելով թիվ ԵԴ2/17913/02/23 քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին հարցը, արձանագրում է հետևյալը.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է դատարանի օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ, բացառությամբ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշման:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործի վարույթը կարճելու մասին առաջին ատյանի դատարանը

կայացնում է որոշում, բացառությամբ սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում, Դատարանն արձանագրում է, որ Դատարանի /նախագահությամբ՝ դատավոր Սերինե Խաչատրյան/ վարույթում է քննվել թիվ ԵԴ2/8797/02/23 քաղաքացիական գործն ըստ հայցի «Մովսեսյան» ՍՊ ընկերության ընդդեմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության՝ ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/10 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից ընդունած՝ Մովսեսյան ՍՊԸ-ի հայտը 1,3,10-րդ չափաբաժինների մասով մերժելու, և նույն չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած համարելու մասին որոշումը անվավեր ճանաչելու մասին:

Դատարանն արձանագրում է նաև, որ սույն քաղաքացիական գործով պատասխանող է հանդիսանում թիվ ԵԴ2/8797/02/23 քաղաքացիական գործով պատասխանող նույն անձը՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, վեճի առարկան թիվ ԵԴ2/8797/02/23 քաղաքացիական գործով հայցի առարկան կազմող որոշումն է, միաժամանակ նույն են նաև փաստական հանգամանքները:

Դատարանն արձանագրում է նաև, որ թիվ ԵԴ2/8797/02/23 քաղաքացիական գործով առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավանորմերը և դրանք համադրելով սույն քաղաքացիական գործի փաստերի հետ՝ Դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ենթակա է կարճման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գործի վարույթը կարճելու մասին դատական ակտով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական

Դատարանը, անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, արձանագրում է հետևյալը.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» [illegible]ստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի [illegible] համաձայն հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում [illegible] ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, բացառությամբ [illegible] հոդվածով նախատեսված դեպքերի:

Տվյալ դեպքում, Դատարանն արձանագրում է, որ սույն գործով [illegible] ծախսերը կազմված են միայն պետական տուրքից: Հայցվորի կողմից հայց ներկայացնելիս նախապես վճարվել է պետական տուրքի գումարը:

Դատարանը, ելնելով վերոգրյալից, գտնում է, որ հայցվոր «Մովսեսյան» ՍՊ ընկերության կողմից պետական տուրքի գումարը նախապես վճարված լինելու պայմաններում, դատական ծախսերի բաշխման հարցը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ, 182-րդ, 183-րդ, 188-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԵԴ2/17913/02/23 քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի «Մովսեսյան» ՍՊ ընկերության ընդդեմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության տնօրենի 30.06.2023թ. 28-379 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին և ՀՀ ֆինանսների նախարարի տեղեկալ Ա. Ավանեսյանին ներկայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, կարճել:

Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **ՄԱՐԻՆԱ ՏԱՇՉՅԱՆ**